

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**1. Ընդհանուր դրույթներ**

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) քաղաքաշինության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 95-1.2-Ղ4-1)

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է Մարզպետին:

**1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ**

Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը, Վարչության մասնագետները:

**1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետերից մեկը:

**1.5. Աշխատավայրը**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք.Վանաձոր, Հայքի հրապարակ 1

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. Համակարգում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման և հաստատման ներկայացման, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծի, բնակավայրի գոտիավորման նախագծի մշակման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը:

2. Համակարգում է քաղաքաշինական գործունեության հսկողությունը, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ:

3. Համակարգում է ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների օբյեկտների ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների ստացումը, ապահովում է կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտներին հասցվելիք վնասների փոխհատուցման գործընթացը:

4. Համակարգում է ստուգումների անցկացման գործընթացը տեղական ինքնակառավարման մարմիններում, համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքերի հայտնաբերման գործընթացը:

5. Համակարգում է հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում քաղաքաշինական գործունեության նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցման գործընթացը, հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության դեպքում ապահովում է

կառուցապատման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայնեցման գործընթացը:

6. Համակարգում է առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկության համաձայնեցման գործընթացը, ապահովում լիազորված մարմնի եզրակացության հիման վրա տեղական նշանակության հուշարձանների փոփոխման թույլտվության գործընթացը:

7. Համակարգում է ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ, մարզային նշանակության ճանապարհների, թունելների, կամուրջների, այլ ինժեներական կառույցների շինարարության, պահպանման և շահագործման աշխատանքների իրականացումը և հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպումը:

8. Համակարգում է ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների մակարդակի գնահատման և ընդունման մեթոդիկայի համաձայն պետական բյուջեով նախատեսված մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների կատարումն ու ընդունումը:

9. Համակարգում է մասնակցությունը մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդի տեղադրման օրինականության ուսումնասիրության աշխատանքներին:

10. Համակարգում է մարզային ենթակայության ավտոճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կահավորանքի շինարարության, շահագործման, նորոգման և պահպանության աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը, պարբերաբար տեղեկությունների հավաքագրումը եղանակային պայմանների, մարզի ավտոճանապարհներին տիրող իրավիճակի, ավտոտրանսպորտի անցանելիության մասին:

11. Համակարգում է միջհամայնքային հասարակական տրանսպորտի և մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեության հետ կապված աշխատանքները և ներմարզային երթուղիներով փոխադրողների ընտրության մրցույթների արդյունքներով մարզպետի որոշմամբ պայմանագրերի կնքումը փոխադրող կազմակերպությունների հետ և միջմարզային երթուղիների ցանցի կազմակերպման հարցերով համագործակցությունը լիազոր մարմնի հետ:

12. Համակարգում է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման կանոններին առնչվող խնդիրների համակարգումը:

13. Համակարգում է մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքները,

14. Համակարգում է համագործակցությունը տնտեսության ենթաճյուղերի՝ էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի և փոստի բնագավառներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների աշխատանքներին:

15. Համակարգում է մասնակցությունը մարզի բնակավայրերի էներգետիկ ենթակառուցվածքների և աղբահանության բարելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքներին, մարզի բնակավայրերի գերեզմանատների գործունեության ուսումնասիրման և շահագործման ընթացիկ աշխատանքներին

16. Ապահովում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը, ինչպես նաև Վարչության համապատասխան ոլորտային մասնագետների մասնակցությունը ԱԻ և ՔՊ մարզային միջոցառումներին:

17. Համակարգում է մարզում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերահսկողությունը:

18. Ապահովում է մարզի զարգացման ռազմավարության ծրագրի, Վարչության տարեկան աշխատանքային պլանի մշակման, մոնիտորինգի կազմակերպման աշխատանքները, իր լիազորությունների շրջանակներում ապահովում առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստումը, ստորագրում Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում ներկայացնում է առաջարկություններ՝ վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

19. Ներկայացնում է առաջարկություններ, զեկուցագրեր իր անմիջական ենթակայությամբ աշխատող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու վերաբերյալ:

### **Իրավունքներ՝**

1. Համակարգել մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման և հաստատման ներկայացման, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծի, բնակավայրի գոտիավորման նախագծի մշակման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը:

2. Համակարգել քաղաքաշինական գործունեության հսկողությունը, միջոցներ ձեռնարկել ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ, վերահսկողություն իրականացնել նշված աշխատանքների հետևողական իրականացման նկատմամբ:

3. Ապահովել ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից օբյեկտների ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների ստացումը, ապահովել կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտներին հասցվելիք վնասների փոխհատուցման գործընթացը:

4. Ապահովել ստուգումների անցկացման գործընթացը տեղական ինքնակառավարման մարմիններում, համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքերի հայտնաբերման գործընթացը:

5. Համակարգել հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում քաղաքաշինական գործունեության նպատակով

համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների համաձայնեցման գործընթացը, հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության դեպքում ապահովել կառուցապատման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայնեցման գործընթացը:

6. Համակարգել առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկության համաձայնեցման գործընթացը, ապահովել լիազորված մարմնի եզրակացության հիման վրա տեղական նշանակության հուշարձանների փոփոխման թույլտվության գործընթացը:

7. Համակարգել համապատասխան մարմիններից պահանջվող և ներկայացվող՝ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ, մարզային նշանակության ճանապարհների, թունելների, կամուրջների, այլ ինժեներական կառույցների շինարարության, պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման, ինչպես նաև հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքները:

8. Ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների մակարդակի գնահատման և ընդունման մեթոդիկայի համաձայն համակարգել պետական բյուջեով նախատեսված մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների կատարման ու ընդունման աշխատանքները:

9. Ապահովել մասնակցություն մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիրության աշխատանքներին:

10. Մարզային ենթակայության ավտոճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կահավորանքի շինարարության, շահագործման, նորոգման և պահպանության աշխատանքների կատարման նկատմամբ ապահովել հսկողության իրականացում, համակարգել եղանակային պայմանների, ինչպես նաև մարզի ավտոճանապարհներին տիրող իրավիճակի, ավտոտրանսպորտի անցանելիության մասին տեղեկատվության հավաքագրումը:

11. Համակարգել միջհամայնքային հասարակական տրանսպորտի և մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեության հետ կապված աշխատանքները և ներմարզային երթուղիներով փոխադրողների ընտրության մրցույթների արդյունքներով մարզպետի որոշմամբ պայմանագրերի կնքումը փոխադրող կազմակերպությունների հետ և միջմարզային երթուղիների ցանցի կազմակերպման հարցերով համագործակցությունը լիազոր մարմնի հետ:

12. Ապահովել տեղեկատվության ստացումը տեղական ինքնակառավարման մարմիններից և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններից բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերն ապահովելու համար իրականացված աշխատանքների և գանձումների վերաբերյալ, կատարել վերլուծություններ և դրանց հիման վրա ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

13. Ապահովել մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման միջոցառումների վերաբերյալ ծրագրերի մշակման աշխատանքների իրականացումը, համակարգել մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակի ընթացիկ ուսումնասիրություններ կատարելու համար այցելությունները, նախաձեռնել քննարկումներ, իրականացնել վերլուծություններ, ապահովել առաջարկությունների նեկայացումը: Վերահսկողություն իրականացնել խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների համապատասխանության նկատմամբ:

14. Ապահովել համագործակցությունը տնտեսության ենթաճյուղերի՝ էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի և փոստի բնագավառներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների աշխատանքներին:

15. Ապահովել մասնակցությունը մարզի բնակավայրերի էներգետիկ ենթակառուցվածքների և աղբահանության բարելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքներին, մարզի բնակավայրերի գերեզմանատների գործունեության ուսումնասիրման և շահագործման ընթացիկ աշխատանքներին

16. Ապահովել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը, ինչպես նաև Վարչության համապատասխան ոլորտային մասնագետների մասնակցությունը ԱԻ և ՔՊ մարզային միջոցառումներին:

17. Ապահովել մարզում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ պարբերական տեղեկատվության ստացումը, լինել հետևողական ժամկետների, կատարված աշխատանքի որակի նկատմամբ:

18. Ապահովել մարզի զարգացման ռազմավարության ծրագրի, Վարչության տարեկան աշխատանքային պլանի մշակման, մոնիտորինգի կազմակերպման աշխատանքները, առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստումը, ստորագրել Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ՝ վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար:

19. Ներկայացնել զեկուցագրեր, առաջարկություններ իր անմիջական ենթակայությամբ աշխատող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու վերաբերյալ:

### **Պարտականությունները՝**

1. Համակարգել մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման և հաստատման ներկայացման, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծի, բնակավայրի գոտիավորման նախագծի մշակման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը:

2. Ապահովել քաղաքաշինական գործունեության հսկողությունը, միջոցներ ձեռնարկել ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ:

3. Համակարգել ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների օբյեկտների ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների ստացումը, ապահովել կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտներին հասցվելիք վնասների փոխհատուցման գործընթացը:

4. Ապահովել ստուգումների անցկացման գործընթացը տեղական ինքնակառավարման մարմիններում, համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքերի հայտնաբերման գործընթացը:

5. Ապահովել հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում քաղաքաշինական գործունեության նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների համաձայնեցման գործընթացը, հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության դեպքում ապահովել կառուցապատման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայնեցման գործընթացը:

6. Համակարգել առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկության համաձայնեցման գործընթացը, ապահովել լիազորված մարմնի եզրակացության հիման վրա տեղական նշանակության հուշարձանների փոփոխման թույլտվության գործընթացը:

7. Ապահովել համապատասխան մարմիններից պահանջվող և ներկայացվող՝ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ: Աջակցել մարզային նշանակության ճանապարհների, թունելների, կամուրջների, այլ ինժեներական կառույցների շինարարության, պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման, ինչպես նաև հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը:

8. Ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների մակարդակի գնահատման և ընդունման մեթոդիկայի համաձայն համակարգել պետական բյուջեով նախատեսված մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների կատարման ու ընդունման աշխատանքները: Ապահովել մասնակցություն մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիրության աշխատանքներին:

9. Մարզային ենթակայության ավտոճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կահավորանքի շինարարության, շահագործման, նորոգման և պահպանության աշխատանքների կատարման նկատմամբ ապահովել հսկողության իրականացում, համակարգել եղանակային պայմանների, ինչպես նաև մարզի ավտոճանապարհներին տիրող իրավիճակի, ավտոտրանսպորտի անցանելիության մասին տեղեկատվության հավաքագրումը:

10. Համակարգել միջհամայնքային հասարակական տրանսպորտի և մարզային

ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեության հետ կապված աշխատանքները և ներմարզային երթուղիներով փոխադրողների ընտրության մրցույթների արդյունքներով մարզպետի որոշմամբ համակարգել համապատասխան մարմիններից պահանջվող և ներկայացվող՝ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվությունը, ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ, մարզային նշանակության ճանապարհների, թունելների, կամուրջների, այլ ինժեներական կառույցների շինարարության, պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման, ինչպես նաև հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքները:

11. Համակարգել միջհամայնքային հասարակական տրանսպորտի և մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեության հետ կապված աշխատանքները և ներմարզային երթուղիներով փոխադրողների ընտրության մրցույթների արդյունքներով մարզպետի որոշմամբ պայմանագրերի կնքումը փոխադրող կազմակերպությունների հետ, ինչպես նաև միջմարզային երթուղիների պայմանագրերի կնքումը փոխադրող կազմակերպությունների հետ, ինչպես նաև միջմարզային երթուղիների ցանցի կազմակերպման հարցերով համագործակցությունը լիազոր մարմնի հետ:

12. Ապահովել տեղեկատվության ստացումը տեղական ինքնակառավարման մարմիններից և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններից բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերն ապահովելու համար իրականացված աշխատանքների և գանձումների վերաբերյալ, կատարել վերլուծություններ և դրանց հիման վրա ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

13. Ապահովել մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման միջոցառումների վերաբերյալ ծրագրերի մշակման աշխատանքների իրականացումը, համակարգել մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակի ընթացիկ ուսումնասիրություններ կատարելու համար այցելությունները, նախաձեռնել քննարկումներ, իրականացնել վերլուծություններ, ապահովել առաջարկությունների նեկայացումը: Վերահսկողություն իրականացնել խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների համապատասխանության նկատմամբ:

14. Ապահովել համագործակցությունը տնտեսության ենթաճյուղերի՝ էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի և փոստի բնագավառներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների աշխատանքներին:

15. Ապահովել մասնակցությունը մարզի բնակավայրերի էներգետիկ ենթակառուցվածքների և աղբահանության բարելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքներին, մարզի բնակավայրերի գերեզմանատների գործունեության ուսումնասիրման և շահագործման ընթացիկ աշխատանքներին:

16. Ապահովել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ

փաստաթղթերի նախապատրաստումը, դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակելը, ինչպես նաև Վարչության համապատասխան ոլորտային մասնագետների մասնակցությունը ԱԻ և ՔՊ մարզային միջոցառումներին:

17. Ապահովել մարզում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ պարբերական տեղեկատվության ստացումը, լինել հետևողական ժամկետների, կատարված աշխատանքի որակի նկատմամբ:

18. Ապահովել մարզի զարգացման ռազմավարության ծրագրի, Վարչության տարեկան աշխատանքային պլանի մշակման, մոնիտորինգի կազմակերպման աշխատանքները, առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստումը, ստորագրել Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ՝ վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար:

19. Ներկայացնել զեկուցագրեր, առաջարկություններ իր անմիջական ենթակայությամբ աշխատող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու վերաբերյալ, գնահատել ենթակա աշխատողների կողմից կատարված աշխատանքները:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

3.1 Կրթությունը, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

#### **3.2 Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### **3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության կամ արդյունաբերության կամ ճարտարագիտության բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ:

#### **3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ ընդհանրական կոմպետենցիաները՝**

- Աշխատակազմի կառավարում
- Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
- Որոշումների կայացում
- Ծրագրերի կառավարում
- Խնդրի լուծում
- Բարեվարքություն

#### **Ընտրանքային կոմպետենցիաները՝**

- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Բանակցությունների վարում
- Փոփոխությունների կառավարում
- Փաստաթղթերի նախապատրաստում
- Տարածքային կառավարում
- Ժամանակի կառավարում



- ելույթների նախապատրաստում և կազմակերպում
- ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- կառավարում արտակարգ իրավիճակներում

#### 4. Կազմակերպական շրջանակ

##### 4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

##### 4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

##### 4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

##### 4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

##### 4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

12/27/19



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ